

ԿԵԱՆՔԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

1. Ս ա ր դ ր

Երբ ես ման եմ գալիս փողոցներում, մտնում եմ պալատները, հասարակական հիմնարկութիւնները, թատրոն և այլն, չգիտեմ ինչու՝ մարդիկ ինձ երևում են զանազան գազանների, կենդանիների կերպարանքով. ինձ միշտ թւում է թէ՛ ներկայ հասարակական կաղմի մէջ մարդիկ իրար մէջ բաժանել են լուռ համաձայնութեամբ զանազան կենդանիների դերեր և մեր կեանքը իսկուպէս մի գազանանոց է դառել։ Երևի ես հիւանդ եմ, որ չեմ կարող աղատ շունչ քաշել մեր այս հասարակական մթնոլորտում։

Ահա քաղաքի ամենագեղեցիկ մասում եմ ես. իմ առջև խրոխտ երկինքն է բարձրանում մի պալատ, որի ճակտին գրած է՝ այս ինչ պարոնի «բանկ»։ Մտնում եմ և վեր բարձրանում մարմարէ տափածաններով, Բարձր և ընդարձակ դահլիճներում, պատերին կից՝ մի շարք գեղեցիկ վանդակներ, որոնց հտեում նստոտած են մաքուր հագնուած մարդուկներ և գրում են անվերջ և համբիշներ չխշխկացնում։ Ահագին թուով մարդիկ ել ու մուտք ունեն այդ պալատը. մէկը փող է բերում, միւսը փող է վերցնում։ Թղթադրամի, արժէքաւոր թղթերի, ոսկու և արծաթի մի հորձանքի կենտրոն է այդ։

Ահագին դահլիճներին կից շքեղ պճնուած մի առանձնառնեսակում, փափուկ բաղկաթուռի մէջ, սովորական գրասեղանի տուփ և բաղամած է ինքը «գործի» տէրը։

—Պարագիւտ, սմրդ,—դուրս պրծաւ իմ բերանից, շնմբի մօտ։

—Ի՛նչ էք ասում,—նկատեց ինձ առանձնառնեսակից դուրս եկող մի պարոն, օր շատ ու շատ գոհ էր իր տնով, իր ճաշով, իր ընտանիքով, իր գործերով։—Նա մի ջէնտրլմէն է, աւելացրեց պարոնը, նա ազգասէր է, բարեգործէ։

Եւ իսկուպէս չափազանց գոհնիկ էր և անքաղաքավարի իմ բացականչութիւնը։ Միթէ պարոն բանկիրը նման էր զգուհիի

պարագիտի Ոչ, նա շատ հաճելի արտաքին ունէր. գեր, լաւ ածիլած գեղեցիկ երես, խնամքով սանրած մազեր կիսաճաղատ փայլուն գլխի վրայ, սրած բեխեր, սրածայր կտրած միրուք: Տեսէք որքան անոյշ և մեղմ է նրա ժպիտը. որքան մաքուր են նրա շորերը, որոնցից բուրում է անուշահոտութիւն:

—Բոլորից յարգուած է նա, աւելացրեց խօսակիցս. մեր հասարակութեան մէջ էլ, մեր քահանաներն էլ, մեր բարեգործական տիկիներն էլ, մեր ազգային դործիչներն էլ գիտեն թէ ինչպիսի՞ բարերար և ազգասէր մարդ է նա: Ազգայինները պարծենում են օտարների առջև որ այդպիսի երեւելի ֆինանսիստ ունեն, իսկ դուք պարագիտ էք անուանում նրան: Մարդը ապրում է ազնիւ, օրինաւոր մի աշխատանքով, իսկ դուք նրան պարագիտ էք անուանում: Ա՛յ էդպէս էք անում որ մեր տունը քանդում էք է՛, ասաց նա դժգոհութեամբ և առանց ձեռք մեկնելու ինձ, հեռացաւ ինձանից թթուած...

Յարգանք և պատիւ մարդ-սարդի ճարպիկ գործունէութեան, որ կարողացել է այնքան բարակ և նուրբ գործել իր ոստայնի թելերը: Իսկական սարդը, կամ գաւառական և գիւղական «վաշխաւուն», որքան միամիտ են և յիմար սրա համեմատութեամբ: Մի քիչ զգուշութիւն է հարկաւոր ճանճերի կողմից որ թակարդ չընկնեն. իսկ ռւր է տեսնում մարդ-սարդի նուրբ թելերը. ձի է կարող ազատուել այդ անտեսանելի թաւարդից: Մաքուր բոկօկօ առանձնասենեակում դուք կը տեսնէք փայլուն մաքրութիւն, քաղցր ժպիտներ, իսկ թելեր... հետքն անգամ չէք գտնի: Այդ նուրբ կատարելագործութեան է հացըրի քաղաքակրթութիւնը մարդ սարդին:

2. Ժ ի ծ ե ո ն ա կ ը

Մի խեղճ և որբ աղջիկ էր Մարին: Նրա միակ ազգականուհին մտաբոյրն էր, որ կարողացաւ իր քրոջ աղջկան կարուձև սովորեցնել: Երբ մեռաւ իր միակ ազգականուհին, Մարին ֆուսք արհեստանոցում և մի քանի ժամանակից յետոյ դառաւ այնտեղ վարպետուհի: Պաքաքի ամենահարուստ տիկիներների սիրած դերձակուհին էր նրա տիրուհին, որ ինչպէս և նրա փառահեղ սալոնը յաճախող նորասէր հարուստ պճնուհները՝ գնահատում էր Մարիի նուրբ ճաշակը:

Ձանձրացաւ Մարին այդ տաղտկալի և միաօրինակ կեանքից. միշտ աշխատել ուրիշի համար: Որքան աւելի բախտաւոր

էր այն ծիծեռնակը, որ դիմացի տանիքի տակ իր բունն էր շինել և ամբողջ օրը ուրախ-ուրախ ճախրում էր, թռչում, մոզուկներ որսում իր ձագուկների համար: Իսկ գիշերը հանգստանում իր բունի մէջ իր ձագուկները և ընկերի հետ միասին: Քաղցր-քաղցր ճմլում էր Մարիի սիրտը ամեն անգամ, երբ անուրջների մէջ նա՝ տեսնում էր իրան իր սեփական բունն ի մէջ, իր ընկերի և ձագուկների հետ միասին:

«Ձէ, պէտք է անպատճառ ընդունել գործակատար Գէորգի առաջարկը», մտաբեծ նա և, վերջապէս, իրագործեց այդ որոշումը:

*

Մարին արդէն սեփական բուն ունի: Եւ ինչո՞ւ չունենայ. ինչո՞ւ նա էլ չվայելի կեանքի երջանկութիւնը: Բոլորս մի անգամ ենք ծնւում. ինչո՞ւ վայել են կեանքի քաղցրութիւնը միայն բախտաւոր շապկի մէջ ծնուածները... Այդ է վաղուայ մարդու միամիտ տրամաբանութիւնը, բայց այլ է այսօրուայ մարդու ստեղծած իրականութիւնը...

Ուրեմն, Մարին սեփական բուն ունի. ունի ընկեր էլ, մի սիրուն ձագուկ էլ: Ծիշտ է, նրա բունը բաւական խղճուկ է և քաղաքի յետ ընկած մի փողոցում, բայց այնուամենայնիւ Մարին սեփական տուն ունի: Նա և իր ընկերը օրն ի բուն աշխատում են և իրանց ձագուկին մեծացնում: Դժուար է, շատ դժուար այդ աշխատանքը: Ազատ ժամանակ չի մնում վայելելու սեփական բնի քաղցրութիւնը: Ծիծեռնակը արեւը մայր մտնելուն պէս հանգիստ քնած է իր բունի մէջ, ձագուկների կողքին, իսկ Մարին պէտք է կտրի քունը, որովհետեւ պատուէրներ ատուղները պահանջում են՝ շո՛ւտ, թէ՛ և այդ պատուէրներ տուողները քաղաքի հարուստ պճնուհիները չեն: Միթէ նրանք կը գան այդպիսի մի խղճուկ բնակարան: Այդպիսի մեծ ու փառաշուք տիկիւններին դրաւելու համար պէտք է փարթամ կարգ ու սարք, գեղեցիկ սալոն, իսկ այդ բոլորը դրամագլուխի բան է. մինչդեռ Մարին և իր ընկեր Գէորգը միայն աշխատելու ընդունակութիւն ունին. ո՞վ է նրանց կապիտալ տուել:

Նրանց ճտիկը մեծանում է: Ծնողները ժամանակ չունին առանձին հոգս տանելու նրա մասին: Եւ խելօք ճտիկը հասկանում է այդ. ինքն իրան զբաղւում է, խաղում: Նա գիտէ որ մայրիկը չի կարող ժամանակ կորցնել. պէտք է աշխատի, աշխատի, և անվերջ աշխատի:

Մի օր էլ ճտիկը խաղում էր պատշգամբում հարեան երեխայի հետ: Այս վերջինը խաղալիս հրեց ճտիկին, որ վայր-

գլորութեց սանդուխներից և կոտորեց ոտը: Ճտիկի ճշի վրայ հասաւ մայրը. կանչեցին բժիշկ. սակայն, ինչպէս շքեղ շորերը, այնպէս էլ լաւ բժշկութիւնը միայն հարուստների համար է...: Վերջը, խեղճ Մարին ամեն օր իր կողքին ստիպուած էր տեսնելու իր ցաւազար մանուկի գունատ ու վշտոտ դէմքը, լսել նրա սիրտ կտրատող տնջոցը. ոտի կատարեալ բժշկութեան համար պէտք էր ջլերը գնալ, արտասահման տանել: Մի բան որ դարձեալ հարուստների վայել տենչանք էր:

*

Օրերն անցնում էին օրերի ետեկց: Մարիի բունի մէջ շուտով պէտք է մի նոր անգամ էլ աւելանար: Ցաւազար ճշտիկը արդէն եօթը տարեկան էր, և նա ամեն բան արդէն լաւ հասկանում էր, և կեանքի դաճութիւնների ու զրկանքների մասին ոչ իր հասակին համեմատ լուրջ հասկացողութիւն ունէր: Գիշերը մայրը գնաց հիւանդանոց:

Առաւօտեան հայրը ինքը թէյ պատրաստեց, մի բաժակ ածեց դրաւ ճտիկի առջև, շտապ-շտապ ինքը խմեց և գնաց բանին:

— Գնա, հայրիկ, ոչինչ, ես մենակ կը մնամ մինչև դու տուն դաս. միայն գնալիս դուռը չփակես յետևիցդ. պատուէր տուողները կը գան, կը զանգահարեն և չեմ կարող վեր կենալ տեղիցս և բանալ:

Հայրը համբուրեց ուշիւ և դժբախտ ձագուկին և գնաց խանութ:

Մենակ է, մենակ ցաւազար ճտիկը:

Ահա տուին դանգը:

— Մտէք, դուռը բաց է, ասաց փոքրիկը:

— Մայրիկդ տանը չէ, հոգիս, ասաց ներս մտնող տիկինը:

— Ոչ, տիկին, նա գնացել է հիւանդանոց՝ ազատուելու:

— Իսկ դու, փոքրիկս, մենակ ես ըլլորովին:

— Այո, տիկին:

— Իսկ հայրիկդ, միթէ նա էլ է գնացել:

— Այո, տիկին, ի՞նչ արած. դորժ ունի:

— Ե՞րբ կը վերադառնայ մայրիկդ:

— Ասաց թէ հինգ օրից յետոյ:

— Ձէ, երեւի սխալուել ես, հոգիս. միթէ կարելի է այդքան շուտ վեր կենալ անկողնուց: Անկարելի է:

— Այո, հինգ օրից յետոյ նա կը գայ: Նա ինձ ասաց որ ձեզ այդպէս էլ յայտնեմ: Հինգ օրից աւել նա չի կարող մնալ. մենք հարուստ չենք. պէտք է հայրիկս աշխատի որ կարողա-

նանք ապրել: Խեղճ մայրիկ. շատ, շատ ցաւեր կրեց նա այս գիշեր: Հայրիկս վաղ առաւօտ զնաց և իմացաւ որ մայրիկը մի փոքրիկ քոյրիկ է բերել...

Եւ մանուկի դալկացած դէմքի վրայ ուրախութեան նշոյլ ցուաց: Նրա մեծ մեծ ու խելացի աչքերի մէջ մի ինչ որ մեղմ, խղճահարող վիշտ անցաւ:

Տիկինը զգացուեց. շոյեց նրա մաղբը, փաղաքշական մի բանի խօսքիւր ասաց և, հազիւ զպելով իր արտասուէնքը, դուրս պրծաւ «ծիծեռնակի բունից»:

Որքան լախտաւոր է իսկական ծիծեռնակը այդ մարդ ծիծեռնակից...

ՍԵՆՆ

ԱՐԷՇԻ ԳԱԻԱՌ

Դանձակի նահանգի Արէշ գաւառը հին «Աղուանից աշխարհի» մի մասն է և ընկած է Քուռ գետի ձախ ափին: Այդ գաւառի զիմաց—գէպի արեւմուտք, Քուռ գետի աջ ափին Ջիւանշիրի և Դանձակի գաւառներն են: Արէշի գաւառը հիւսիսից սահմանակից է Նուխուայ գաւառին, իսկ արեւելքից կապած է Բազուի նահանգի Գիօկչայ գաւառին: Մեծ մասամբ տափարակ Արէշի գաւառը բռնուած է 2,823 քառակուսի վերստ տարածութիւն և ուռ-գուած է Քուռ գետի ձախակողմեան մանր ու մեծ օժանդակ—գետակներով (притоки): Առանց արուեստական ջրանցքների և առուների, առանց ոռոգման այդ տափարակներում անհնարին է երկրագործական կուլտուրը: Տգէտ, իր բախտին թողնուած աղգաբնակութիւնը ներկայ խաւար և աղիկար բեժիմի ժամանակ անգամ, իր սեփական միջոցներով կարողացել է օգտուել փարթամ բնութեան բարեքնեքից և հողագործութիւնը և այգեպանութիւնը բաւական արդիւնաւոր վիճակի հասցնել: Աւելի կուլտուրական և բարեկարգ մի բեժիմ Արէշը կարող էր